



Ֆինանսական և ռիսկերի դասընթացների փաթեթ



Բովանդակություն

- Ֆինանսական հաշվառում
- Բյուջետավորում
- Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն
- Ֆինանսական վերահսկողություն
- Ֆինանսական գործիքներ
- Ռիսկերի կառավարում
- Շուկայական ռիսկի կառավարում: Տոկոսադրույքի և արտաժույթի փոխարժեքի ռիսկի կառավարում
- Ռիսկերի ընդունման կարողություն և կապիտալի համարժեքության պլանավորում
- Վարկային ռիսկերի կառավարում
- Լիզինգ

Ֆինանսական հաշվառում



Դասընթացի նկարագրություն

Այս դասընթացը հետաքրքրություն է ներկայացնում բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են մուտք գործել հաշվապահական հաշվառման աշխարհ: Դասընթացի նպատակն է՝ ամուր հիմք ստեղծել ֆինանսական հաշվապահության համար, որն անհրաժեշտ է նաև ֆինանսական կառավարման, վերլուծության, պլանավորման և բյուջետավորման հետագա ուսումնասիրությունների համար: Դասընթացի մասնակիցները նախնական պատկերացում կկազմեն ֆինանսական հաշվառման հիմքում ընկած հաշվապահական հաշվառման հիմնարար սկզբունքների և հասկացությունների մասին, կսովորեն կատարել հաշվապահական գործարքների կրկնակի գրառում, կստանան համապարփակ պատկերացում հիմնական կարգերի, այդ թվում՝ ոչ ընթացիկ ակտիվների, պաշարների, ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների մասին: Դասընթացում ներառված են նաև եկամուտների և ծախսերի ճանաչման սկզբունքները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների փաթեթին:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Այս դասընթացի մասնակիցները հստակ պատկերացում կկազմեն ֆինանսական հաշվառման հիմունքների մասին, կսովորեն օգտվել կրկնակի գրանցման համակարգից և կազմել պարզ ֆինանսական հաշվետվություններ:

Նպատակային խումբ

Հաճախորդների սպասարկման ներկայացուցիչներ, հաշվետվությունների պատրաստման և բյուջետավորման համար պատասխանատու թիմի անդամներ, աուդիտորական խմբի անդամներ, բոլոր նրանք, ովքեր ունեն քիչ փորձ կամ առհասարակ փորձ չունեն և ցանկանում են լրացնել ֆինանսական հաշվառման գիտելիքի իրենց բացը, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել ֆինանսական վերլուծության և պլանավորման ոլորտում:


Դասընթացը կօգնի

- Սահմանել և նույնականացնել ակտիվները, պասիվները (պարտավորությունները), սեփական կապիտալը, եկամուտները և ծախսերը
- Կազմել գլխավոր գրքի գրառումները՝ հիմնական տեսակների գործարքները գրանցելու համար
- Սահմանել և նույնականացնել ֆինանսական հաշվետվությունների տեսակները

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Գործնական վարժություններ
- Քննարկումներ և թիմային աշխատանք

Նախնական գիտելիքներ՝ անհրաժեշտ չեն
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 10 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո



Բյուջետավորում



Դասընթացի նկարագրություն

Բյուջետավորումը հանդիսանում է ամենատարածված և ընդունված գործիքը պլանավորման և վերահսկողության համար: Ձեռնարկությունը կարող է ունենալ լավ սահմանված բյուջետավորման գործընթացի կարիք իր ապագա ֆինանսական դրությունը գնահատելու և համապատասխան ֆինանսներ և անձնակազմ պլանավորելու համար: Այս դասընթացը ապահովում է հիմնավոր պատկերացում բյուջետավորման գործընթացի մասին և ներառում է գործնական ուղեցույց ֆինանսական բյուջեի նախագծման և յուրացման համար: Այն պարզաբանում է բյուջետավորման գործընթացը՝ ներկայացնելով, թե ինչպես պետք է կազմել ամբողջական բյուջեն, ինչպես նաև վերահսկողությանը և հաշվետվությունների ներկայացմանն առնչվող ընթացակարգերը: Դասընթացը նաև անդրադառնում է հիմնական բյուջեի վարիացիաներին՝ բյուջեի ճկուն և զրոյական տարբերակներին:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Բյուջետավորումը կարևոր դեր է խաղում առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործման մեջ, որը առանցքային նշանակություն ունի կազմակերպության բոլոր նպատակներին հասնելու գործընթացում: Այն օգտագործվում է կազմակերպության քաղաքականությունը և նպատակները գնահատելու համար: Այն նաև ենթադրում է բոլոր մակարդակների ղեկավարների մասնակցությունը նպատակների սահմանման գործընթացում: Այն քաղաքականությունների պլանավորման և կազմավորման ուղեցույց է հանդիսանում ղեկավարության համար: Բյուջետավորումը ապահովում է բիզնեսի եկամուտը և ծախսերը վերահսկելու միջոցներ, ինչպես նաև ծախսերի պլանավորում: Այն օգնում է շահավետ եղանակով ղեկավարել կապիտալ և եկամտային ռեսուրսները: Այն նաև արագորեն բացահայտում է կազմակերպության թույլ կողմերը, անարդյունավետությունը և շեղումները և տրամադրում է դրանք հաղթահարելու միջոցներ նպատակներին հասնելու համար: Այս դասընթացը կպատրաստի այնպիսի աշխատակիցներ, ովքեր կկարողանան կազմակերպություններին օգնել հաղթահարել վերոնշյալ խնդիրները:

Նպատակային խումբ

Դասընթացը նախատեսված է այն անձանց համար, ովքեր չունեն բյուջետավորման մասին բազային գիտելիքներ և ցանկանում են հիմնավոր պատկերացում կազմել բյուջեների և բյուջետավորման գործընթացների մասին՝ ֆինանսական տվյալների մասին համապատասխան քննարկումներին մասնակցելու և որոշումներ կայացնելու նպատակով: Այս դասընթացին կարող են մասնակցել նաև ֆինանսական վերլուծաբանները, բյուջեի վերահսկման մասնագետները և բոլոր նրանք, ովքեր ցանկանում են հասկանալ բյուջետավորման հիմունքները:

Դասընթացի անցկացման մեթոդներ


- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ
- Քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր

Դասընթացի կոգնի

- Բացատրել բյուջետավորման դերը ռազմավարական կառավարչական հաշվառման մեջ
- Կիրառել բյուջետավորման մասին գիտելիքները բյուջեի նախագծման գործընթացում՝ օգտագործելով հաշվապահական տվյալներ և Էլեկտրոնային աղյուսակներ
- Գլխավոր բյուջեի տարրերի տարբերակում
- Բյուջետավորման գործընթացների կիրառությունների և գործառույթների տարբերակում
- Չուգործել ֆինանսական բյուջեի նախագծումը առանձին գործառնական բյուջեներով
- Տրամաբանական հաջորդականությամբ համակարգել բյուջեի պլանավորումը և մշակումը
- Ճկուն բյուջեի նախագծումը որպես չնախատեսված թիզներ իրավիճակներին հարմարեցման տարր
- Բյուջետավորված և փաստացի տվյալների շեղումների վերլուծություն

**Նախնական գիտելիքներ՝ անհրաժեշտ չեն
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 6 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**

Ֆինանսական հաշվետվությունների վերլուծություն



Դասընթացի նկարագրություն

Այս դասընթացը կատարյալ ընտրություն կլինի այն անձանց համար, ովքեր ցանկանում են զարգացնել ֆինանսական հաշվետվությունները հասկանալու, շահութաբերության, իրացվելիության, արդյունավետության և մաշվածության հիմնական գործակիցները հաշվարկելու, մեկնաբանելու և վերլուծելու, ինչպես նաև հաշվետվություններում թաքնված միտումները բացահայտելու համար անհրաժեշտ գիտելիքները և հմտությունները: Մասնակիցները պատկերացում կկազմեն այն մասին, թե ֆինանսական հաշվետվությունները ինչպես կարող են շահարկվել ցանկալի արդյունք ստանալու նպատակով, թե ինչպիսի խնդիրներ կարող են առաջանալ անցյալի ֆինանսական տեղեկատվությունը օգտագործելու հետևանքով և թե ինչ ազդեցություն կարող է ունենալ հաշվապահական քաղաքականությունների փոփոխությունը:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Մասնակիցները կկարողանան իրականացնել հիմնական գործակիցների վերլուծություն, մեկնաբանել և վերլուծել բիզնես միջավայրում օգտագործվող ֆինանսական հաշվետվությունները և դրանցում առկա տեղեկատվությունից կատարել ճշգրիտ եզրակացություններ:

Նպատակային խումբ

Սկսնակներ, ովքեր ցանկանում են միանալ հաշվետվություններ կազմելու, բյուջետավորման, ռիսկերի կառավարման, ներդրումային բանկերի և աուդիտի թիմերին, անհատական բանկային մասնագետներին և աշխատակցիներին, ովքեր ներգրավված են բիզնեսի գնահատման և վարկավորման որոշումների կայացման գործընթացներում:

Դասընթացը կօգնի


- Հաշվարկել հիմնական ֆինանսական գործակիցները. շահութաբերության, իրացվելիության, արդյունավետության, gearing և ներդրումային
- Մեկնաբանել տարբեր գործակիցները
- Իրականացնել կազմակերպությունների կատարողականի վերլուծություն՝ հիմնվելով ֆինանսական և ոչ ֆինանսական տվյալների վրա



Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր

Նախնական գիտելիքներ՝ ֆինանսական հաշվապահություն
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 9 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո





Ֆինանսական վերահսկողություն

Դասընթացի նկարագրություն

Դասընթացի շրջանակներում ներկայացվում են հիմնական հմտությունները և գործնական օրինակները՝ ինչպես մշակել, գործարկել և իրականացնել ներքին ֆինանսական հսկողության միջոցներ և գնահատել ֆինանսական կազմակերպություններում ներքին վերահսկողության համակարգի արդյունավետությունը: Արդյունավետ ներքին վերահսկողությունն անվտանգ և հզոր բանկային գործունեության հիմքն է: Գործառնական և ֆինանսական ներքին վերահսկողության պատշաճ ձևավորված և հետևողականորեն գործարկվող համակարգի օգնությամբ բանկի տնօրենների խորհուրդը և ղեկավարությունը կարող են պաշտպանել բանկի ռեսուրսները, պատրաստել արժանահավատ ֆինանսական հաշվետվություններ և գործել օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Այս դասընթացն անցնելով՝ գործնական աշխատանք կատարող մասնագետները կկարողանան հասկանալ, ներքին վերահսկողության համակարգի կառուցվածքը և ներքին արդյունավետությունը: Դասընթացին մասնակցող բոլոր մակարդակների ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք ուղեցույցներ կստանան ներքին ֆինանսական վերահսկողության միջոցների մշակման, գործարկման և իրականացման, ինչպես նաև դրանց արդյունավետությունը գնահատելու մասով՝ Թրեդուեյի անվան հանձնաժողովի հովանավոր կազմակերպությունների կոմիտեի (COSO) պահանջներին համապատասխան:

Տարբեր գործընթացներում վերահսկողության կիրառումը հասկանալու շնորհիվ դասընթացի մասնակիցները կլինեն տեղեկացված և շահագրգռված՝ ստանձնելով արդյունքների բարելավման համար պատասխանատվություն:

Նպատակային խումբ


Դասընթացը նախատեսված է կազմակերպության գործընթացներում գործառնական ղեկավար կազմի համար, ովքեր կարող են ներքին ֆինանսական վերահսկողության մասին գիտելիքներից օգտվելով՝ հրաժարվել անարդյունավետ, ավելորդ կամ ոչ գործուն վերահսկողության միջոցներից և նպաստել ընկերության երկարաժամկետ նպատակների իրագործմանը:

Դասընթացի արդյունքներ

- Հասկանալ ներքին վերահսկողության անհրաժեշտությունը, պարզել թե ինչպես այն կարող է նպաստել բանկերի և ֆինանսական կազմակերպությունների խնդիրների լուծմանը և նպատակների իրականացմանը
- Իմանալ ներքին ֆինանսական հսկողության գործառնությունների մշակման և գործարկման հետ կապված պարտականությունները
- Հասկանալ ներքին վերահսկողության 5 բաղադրիչները և COSO-ի համաշխարհային «ոսկե» չափանիշի 17 սկզբունքները
- Վերլուծել ներքին վերահսկողության նպատակների ու կառուցվածքի և նրա բաղադրիչների միջև առկա փոխհարաբերությունները (COSO's cube)
- Գործնական օրինակներով մշակել և իրականացնել ներքին վերահսկողությունը բիզնես գործընթացներում
- Սովորել գնահատել ներքին վերահսկողության արդյունավետությունն, գործնական կիրառելիությունը և իրավիճակային խնդրի ուսումնասիրության հիման վրա փաստաթղթավորել ներքին վերահսկողության թերությունները

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Ներկայացում
- Ինտերակտիվ խմբային վարժություններ
- Դեպքերի ուսումնասիրություն
- Զննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր



**Նախնական գիտելիքներ՝ ֆինանսական գիտելիքներ
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 6 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**

Ֆինանսական գործիքներ

Դասընթացի նկարագրություն

Դասընթացը ապահովում է ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման, ECL(expected credit loss)-ի, իրական արժեքի սահմանման և հայտնաբերման բազային գիտելիքներ գործնական օրինակների հիման վրա:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Այս դասընթացը անցնելով՝ մասնակիցները կկարողանան պատկերացում կազմել ֆինանսական գործիքների հետ կապված գործնական խնդիրների մասին: Դասընթացը ներառում է բազմաթիվ օրինակներ այլ երկրների փորձից, որոնք կարող են գործնական կիրառություն գտնել:

Նպատակային խումբ

Դասընթացը նախատեսված է բիզնես գործընթացներում ներգրավված մասնագետների, ինչպես նաև կառավարման տարբեր մակարդակներում և ֆինանսական բաժիններում աշխատող անձանց համար:

Դասընթացը կօգնի

- Հասկանալ ֆինանսական գործիքների դասակարգման և գնահատման հիմնական սկզբունքները
- Հասկանալ ECL-ի հիմնական սկզբունքները
- Հաշվարկել և մեկնաբանել ECL պարամետրեր
- Հասկանալ Կովիդ 19-ի ազդեցության գնահատման գործընթացը
- Կազմել ֆինանսական գործիքների մասին հաշվետվություններ

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր



**Նախնական գիտելիքներ՝ ֆինանսների մասին գիտելիքներ
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 10 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**





Ռիսկերի կառավարում

Դասընթացի նկարագրություն

Այս դասընթացը նախատեսված է ռիսկերի կառավարման ոլորտում գիտական հիմք ապահովելու համար: Դասընթացքում ներառված նյութերը բավականին լայնածավալ են: Այն կապահովի ամուր հիմք, որը կարող է ռիսկերի կառավարման մասնավոր ոլորտներում հետագա զարգացման խթան հանդիսանալ և/կամ ընդարձակել գիտելիքները բանկային ոլորտի էությունը ավելի լավ հասկանալու համար:

Դասընթացը նաև անդրադառնում է ռիսկերի կառավարման սկզբունքներին և կարգավորման պահանջներին, ներառյալ միջազգային ստանդարտները, ինչպիսիք են՝ Բազելյան կոմիտեի համաձայնագրերը:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Այս դասընթացին մասնակցելուց հետո կազմակերպությունը կունենա ավելի լավ վերապատրաստված աշխատակիցներ, ովքեր, անկախ զբաղեցրած պաշտոնից, հստակ պատկերացում կունենան ռիսկերի կառավարման մասին և կօգտագործեն ռիսկերի կառավարման սկզբունքները իրենց առօրյա աշխատանքում և որոշումների կայացման գործընթացում: Աշխատակիցները խորը գիտելիքներ ձեռք կբերեն, ինչը կօգնի նրանց ավելի լավ պատկերացում կազմել սպառնալիքների մասին, որոնք ազդում են կազմակերպության վրա, ներառյալ գործառնական, ֆինանսական, վարկային և այլ ռիսկերը:

Նպատակային խումբ

Դասընթացը նախատեսված է նրանց համար, ովքեր նոր են մուտք գործել բանկային ոլորտ, ինչպես նաև նրանց համար, ովքեր արդեն իսկ աշխատում են այդ ոլորտում, սակայն ցանկանում են ձեռք բերել ավելի խորը գիտելիքներ կամ մասնագիտանալ ռիսկերի կառավարման մեջ:

Ռիսկերի կառավարման վարչությունների աշխատակիցները, մասնաճյուղերի կառավարիչները, բաժնի ղեկավարները և վարկային կազմակերպությունները, հաշվապահները, աուդիտորները:




Դասընթացի արդյունքներ

- Սահմանել, թե ինչ է ռիսկը և ռիսկերի կառավարումը, հասկանալ ռիսկերի կառավարման շրջանակները և ռիսկերի կառավարման սկզբունքները
- Հասկանալ Բազելյան ստանդարտների և դրանց կիրառության պահանջները
- Հասկանալ վարկային ռիսկերի կառավարման և դրանց հնարավոր կիրառության հիմնական բաղադրիչները
- Հասկանալ գործառնական ռիսկերի կառավարման և դրանց հնարավոր կիրառության հիմնական բաղադրիչները

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրավիճակային վերլուծություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր

**Նախնական գիտելիքներ՝ բազային գիտելիքներ բանկային գործի մասին
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 10 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**





Շուկայական ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի և արտաժույթի փոխարժեքի ռիսկի կառավարում

Դասընթացի նկարագրություն

Այս դասընթացը ներկայացնում է շուկայական ռիսկը. շուկայական ռիսկը շուկայական գների հակադիր փոփոխությունների պատճառով ֆինանսական ակտիվներում կամ գործիքներում բանկի դիրքերի փոփոխության հետևանքով առաջացած ռիսկն է: Բանկերը դիտարկում են շուկայական ռիսկը քանի որ նրանք արժեթղթային գործարքներ են իրականանցում՝ ռիսկի ենթարկելով իրենց սեփական կապիտալը, և, ըստ անհրաժեշտության, օգտագործում են ֆինանսական գործիքներ: Շուկայական ռիսկերի կառավարման ձախողումը կարող է էական ազդեցություն ունենալ բանկի շահութաբերության և համբավի վրա: Այս դասընթացը ներկայացնում է շուկայական ռիսկերի գնահատման և կառավարման տարաբնույթ մոտեցումներ, ներառյալ միջազգային ստանդարտներով հաստատված մոտեցումները:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Մասնակիցները ձեռք կբերեն հիմնավոր գիտելիքներ տոկոսադրույքի և արտաժույթի փոխարժեքի ռիսկերի կառավարման վերաբերյալ: Մասնակիցները նաև կկարողանան իրենց կազմակերպություններում կիրառել տոկոսադրույքի և արտաժույթի փոխարժեքի ռիսկերի կառավարման սթրես-թեստավորման և մոդելների մշակման գործնական գիտելիքները:

Նպատակային խումբ

Այս դասընթացը նախատեսված է այն անձանց համար, ովքեր զբաղվում են ռիսկերի կառավարման գործընթացներով կամ հանդիսանում են ներքին աուդիտորներ, ֆինանսական վերլուծաբաններ, հաշվետու աշխատակիցներ: Դասընթացը նաև կհետաքրքրի այն անձանց, ովքեր ծանոթ են ռիսկերի կառավարման հիմունքներին:

Դասընթացի արդյունքներ

- Գործնական գիտելիքներ ILAAP գործընթացների վերաբերյալ՝ կենտրոնականալով նյութական ռիսկի շարժիչների և գործոնների նույնականացման, չափման վրա
- Գործնական գիտելիքներ իրացվելիության սթրես թեստերի նախագծման վերաբերյալ
- Կիրառական գիտելիքներ իրացվելիության պլանավորման և կառավարման գծով

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր

**Նախնական գիտելիքներ՝ բազային գիտելիքներ բանկային գործի,
հաշվապահության, ռիսկերի կառավարման հիմունքների վերաբերյալ
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ**

Մակարդակ՝ միջին

Լեզու՝ հայերեն

Դասընթացի նյութեր՝ հայերեն

Տևողություն՝ 8 ժամ

Վերջնական թեստ՝ այո

Հավաստագիր՝ այո



Ռիսկերի ընդունման կարողություն և կապիտալի համարժեքության պլանավորում



Դասընթացի նկարագրություն

Ռիսկերի ընդունման կարողության և կապիտալի համարժեքության պլանավորման դասընթացը ձեզ է ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը. Բազեյան համաձայնագրերի եռայուն մոդելը հատուկ ուշադրություն է կենտրոնացնում ռիսկերի կառավարման վրա, ինչպես նաև տրամադրում է ուղեցույցեր կապիտալի պահանջների հաշվարկների վերաբերյալ և սահմանում է ընդլայնված հաշվետվությունների պահանջները: Բանկերը հետևաբար բախվում են ներքին ընթացակարգերի և համակարգերի մշակման մարտահրավերներին և պետք է հավաստիացնեն, որ նրանք, բոլոր նյութական ռիսկերը հաշվի առնելով, երկար ժամանակահատվածում տիրապետում են համապատասխան կապիտալային ռեսուրսներին:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար



Մասնակիցները ձեռք կբերեն գործնական գիտելիքներ և կյուրացնեն ներքին կապիտալի համարժեքության և իրացվելիության գնահատման գործընթացները ռիսկերի կառավարման միջավայրերում դրանց տարաբնույթ կիրառությունների հետ միասին, համապարփակ պատկերացում կկազմեն հայեցակարգային հիմունքների և բանկային ոլորտում կապիտալի պլանավորման նորագույն մոտեցումների մասին, որոնք կարող են օգտագործվել տարբեր կազմակերպություններում: Մասնակիցները նաև կծանոթանան բանկային ոլորտի նորագույն մոտեցումներին և կարգավորման միտումներին, ներառյալ ICAAP-ը և ILAAP-ը, և հատուկ ուշադրությունը կկենտրոնացվի կամակերպությունների կողմից ռիսկերի ընդունման կարողության ապահովման վրա:

Նպատակային խումբ

Այս դասընթացը կհետաքրքրի նրանց, ովքեր ցանկանում են խորապես մասնագիտանալ կապիտալի և իրացվելիության համարժեքության գնահատման գործընթացներում: Դասընթացը անհրաժեշտ է այն անձանց, ովքեր արդեն իսկ ներգրավված են ռիսկերի կառավարման գործընթացներում, մասնավորապես՝ կապիտալի պլանավորման և կապիտալի և իրացվելիության ռիսկերի կառավարման գործընթացներում, նաև անհրաժեշտ է ռիսկերի կառավարման մասնագետներին, հաշվետվություններ պատրաստող աշխատակիցների, ակտիվների և պարտավորությունների կառավարման բաժինների մասնագետներին կամ նրանց, ովքեր ցանկանում են առաջընթաց ապրել իրենց կարիերայում և լինել պատրաստ:



Դասընթացի արդյունքներ

- Գործնական գիտելիքներ ներքին կապիտալի համարժեքության գնահատման գործընթացի մասին, ներառյալ նյութական ռիսկերի աղբյուրների և գործոնների հայտնաբերումը և գնահատումը
- Գործնական գիտելիքներ ներքին կապիտալի համարժեքության գնահատման և ներքին իրացվելիության համարժեքության գնահատման գործընթացների մասին, ներառյալ նյութական ռիսկերի աղբյուրների և գործոնների հայտնաբերումը և գնահատումը
- Գործնական գիտելիքներ կապիտալի համարժեքության, կապիտալի պլանավորման, իրացվելիության ռիսկերի գնահատման և իրացվելիության պլանավորման հետ կապված սթրեսների մշակման վերաբերյալ

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ

**Նախնական գիտելիքներ՝ բազային գիտելիքներ բանկային գործի մասին
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 8 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**

Վարկային ռիսկերի կառավարում

Դասընթացի նկարագրություն

Այս դասընթացը ներկայացնում է վարկային ռիսկը և վարկային ռիսկերի կառավարումը՝ ուշադրությունը կենտրոնացնելով վարկային ռիսկերի վերլուծության և վարկային ռիսկերի կառավարման բացատրության վրա: Դասընթացը անդրադառնում է վարկային ռիսկերին՝ կենտրոնանալով վարկային ռիսկերի աղբյուրները բացատրելու և սահմանելու վրա, տրամադրելով վարկատուների և վարկառուների և վարկային պրոդուկտների մանրակրկիտ նկարագիրը, խորապես ուսումնասիրելով պորտֆելային ռիսկերի կառավարման հատուկ առանձնահատկությունները, ինչպես նաև Բազելյան ստանդարտների ազդեցությունը վարկային ռիսկերի կառավարման գործընթացի վրա:

Ծրագրում շոշափվող թեմաները բավականին լայնածավալ են, և մենք կանդրադառնանք վարկային ռիսկերի հիմնական առանձնահատկություններին, կիսականանք, թե որտեղ են դրանք հանդիպում և թե ինչպես են գնահատվում, և թե ինչու են բանկերը պարտավոր ունենալ սեփական կապիտալ կորուստներին դիմակայելու համար:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Դասընթացի ավարտին մասնակիցները ձեռք կբերեն հմտություններ և գիտելիքներ, որոնք կօգնեն նրանց որոշումներ կայացնել ոչ միայն ֆինանսական և համեմատական վերլուծությունների վրա հիմնվելով, այլև հաշվի առնելով բիզնեսի առանձնահատկությունները, կառավարման ոճը և տեսակը, ինչպես նաև տնտեսական պայմանների և բիզնես սեփականատերերի վերլուծությունը:

Կազմակերպությունները կարող են վստահ լինել, որ դասընթացի մասնակիցները ոչ միայն ձեռք կբերեն նոր գիտելիքներ, այլև կկարողանան վերլուծել հաճախորդների իրական կարիքները և այդ կարիքների համապատասխանությունը ֆինանսական պրոդուկտների հետ: Մասնակիցները կազմակերպության ներսում կկարողանան օգտագործել պորտֆելի կառավարման ժամանակակից և միջազգայնորեն ընդունված մեթոդներ:

Նպատակային խումբ

Հաճախորդների հետ կապերի ղեկավարները, վարկային մասնագետներ, վարկային և բիզնես վերլուծաբաններ, վարկային ռիսկերի կառավարման մասնագետներ, խորհրդատուներ, ովքեր ներգրավված են վարկերի տրամադրման և ՓՄՁ պրոդուկտների մեջ, նորմատիվային բաժնի ղեկավարները, ղեկավար պաշտոնյաները, աուդիտորները, ինչպես նաև ցանկացած անձ, ով ցանկանում է աշխատանքի անցնել բանկում կամ այլ ֆինանսական հաստատությունում:


Դասընթացի արդյունքներ

- Վարկային պրոդուկտների հետ կապված ռիսկեր և առանձնահատկություններ
- Վարկային վերլուծության գործընթաց, հաճախորդների վարկունակություն, գնահատում և դրա կարևոր բաղադրիչները
- Վարկային ռիսկերի կառավարման վերաբերյալ Բազելյան համաձայնագրերի պահանջների մասին խորը գիտելիքներ
- Պորտֆելի կառավարման կայուն հմտություններ

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ և դասախոսություններ
- Իրական կյանքում օգտագործվող գործնական օրինակներ
- Իրավիճակային վերլուծություններ
- Ֆորում-քննարկումներ
- Գիտելիքների ստուգման թեստեր

**Նախնական գիտելիքներ՝ բազային գիտելիքներ բանկային գործի մասին
Ձևաչափ՝ դասընթացավարի ուղղորդմամբ
Մակարդակ՝ միջին
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 9 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո**



ԼԻԶԻՆԳ

Դասընթացի նկարագրություն

Դասընթացը ստեղծված է ֆինանսական ոլորտի մասնագետների համար, մասնավորապես՝ բանկի և վարկային կազմակերպությունների կրտսեր դասի աշխատակիցների համար: Դասընթացը հնարավորություն կտա պատկերացում կազմել աշխարհում մեծ տարածում ձեռք բերող ֆինանսական գործիքի՝ լիզինգի վերաբերյալ, ինչպես նաև հետազայում զարգացնել պրոդուկտը և կիրառել նաև մասնակիցների կողմից իրենց ընկերություններում:

Դասընթացի օգտակարությունը Ձեր և Ձեր ընկերության համար

Քանի որ օրեցօր սրվում է մրցակցությունը ՀՀ ֆինանսական շուկայում, ապա շատ կարևոր է ավանդական պրոդուկտներից անցում կատարել միջազգային շուկայում մեծ պահանջարկ վայելող նոր պրոդուկտների ներդրմանը, ինչը մրցակցային առավելություն կապահովի Ձեր ընկերությունների համար:

Նպատակային խումբ

Ֆինանսական ոլորտի մասնագետներ, մասնավորապես՝

- Բանկի կրտսեր և միջին օղակի մասնագետներ
- Վարկային կազմակերպությունների կրտսեր և միջին օղակի մասնագետներ
- Տարբեր ընկերությունների ֆինանսիստներ, ովքեր զբաղվում են ընկերության համար ֆինանսական ռեսուրսների ներգրավմամբ

Դասընթացի արդյունքներ

- «Լիզինգ» հասկացություն
- Առաջացման պատմություն
- Լիզինգի տարատեսակներ
- Կիրառման անհրաժեշտություն
- Օրենսդրական բազան
- Միջազգային պրակտիկայում կիրառելիություն
- ՀՀ-ում պրոդուկտի զարգացման հնարավորություններ

Դասընթացի անցկացման մեթոդներ

- Պրեզենտացիաներ
- Տեսաձայնագրություններ
- Գիտելիքները ստուգող թեստեր

Նախնական գիտելիքներ՝ անհրաժեշտ չեն
Ձևաչափ՝ առանց դասընթացավարի ուղղորդման
Մակարդակ՝ սկսնակ
Լեզու՝ հայերեն
Դասընթացի նյութեր՝ հայերեն
Տևողություն՝ 3 ժամ
Վերջնական թեստ՝ այո
Հավաստագիր՝ այո

